

Համաձայնեցված է  
Հայաստանի Հանրապետության  
Ֆինանսների նախարար  
\_\_\_\_\_ Վ. Գաբրիելյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի նախագահ  
\_\_\_\_\_ Գ. Խաչատրյան  
16 ապրիլի 2012 թ.  
N 15

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

### «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 30.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30.2-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողի չկատարած՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի պարտավորությունների մարմանը:

Ընդ որում՝ հարկային մարմնին է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ՝ ապառքը և դրա նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ:

Որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Գրավի պայմանագիր կնքվելու դեպքում պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:

Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը: Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, *պաշտոնապես պարզաբանում եմ.*

1. Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկային մարմինը ձեռք է բերում հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու պետական բյուջեի հանդեպ հարկ վճարողի պարտավորությունների մարմանը: Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքի անցումը հարկային մարմնին չի դադարեցնում հարկ վճարողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում տույժերի և տուգանքների հաշվարկումը:



2. Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկային մարմնին անցած պահանջի իրացմանը (մասնակի իրացմանը) համապատասխան պետական բյուջեի գանձապետական հաշիվներին մուտքագրված գումարները դիտվում են որպես նպատակային վճարումներ և դրանց հաշվին առաջնային մարվում են պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի այն պարտավորությունները, ի կատարումն որոնց կնքվել է պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը:

3. Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկային մարմնին անցած պահանջի իրավունքը համարվում է լրիվ իրացված՝ իրավունքի անցման պահին պարտապանի կողմից հարկ վճարողի նկատմամբ առկա ամբողջ ծավալով պարտավորությունների մարման դեպքում և (կամ) պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկ վճարողի կողմից պետական բյուջեի նկատմամբ առկա ամբողջ ծավալով պարտավորությունների մարման դեպքում:

4. Պահանջի իրավունքի զիջման պայմանագրով պարտապանի կողմից՝ պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի պարտավորություններից ավելի վճարված գումարները ենթակա են հաշվանցման պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի այլ պարտավորությունների մարմանը կամ վերադարձման հարկ վճարողին՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. Պահանջի զիջման պայմանագրով պարտապանի կողմից հարկ վճարողի պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների մարմանն ուղղված՝ համապատասխան գանձապետական հաշիվներին կատարված փոխանցումները (այդ թվում՝ սույն պաշտոնական պարզաբանման 4-րդ կետում նշված դեպքում) համարվում են նաև բանկի միջոցով (եթե վճարումը կատարվել է բանկի միջոցով) կամ փոստի միջոցով (եթե վճարումը կատարվել է փոստի միջոցով) հարկ վճարողի բանկային հաշվին կատարված վճարումներ: